

Ժողովուրդ

118
(2784)

25 օգոստոսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ՝ ԳԱՎԱՌԻ ԴԵՊՐԵՑ



Գավառցի երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած մոր՝ Աննա Արեւշատյանի նկատմամբ հարուցված քրեական գործով Նուբարաշենի բանտում հարցաքննվել է երեխաների հայրը՝ Թաթուլ Մադաթյանը: Նշենք, որ Թաթուլ Մադաթյանը կալանավորված է սեփական երեխաների նկատմամբ սեռական բռնություն իրականացնելու համար եւ կալանքը կրում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Մեզ հասած լուրերի համաձայն՝ երեխաների հորը հարցաքննել են, քանի որ Աննա Արեւշատյանը իրավապահներին հայտնել է, որ երեխայի նկատմամբ այդպես վարվել ու նկարելը ունեցել է մեկ նպատակ՝ ուղարկել ամուսնուն: Իսկ թե ամուսինն ինչ է արել այդ նկարահանած տեսանյութը, ու որտեղից է այն տարածվել համացանցում, Աննա Արեւշատյանն ասել է՝ ինքը տեղյակ չէ: Եվ, ահա, այդ նպատակով իրավապահները մտել են Նուբարաշենի բանտ՝ խուզարկության:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն, հենց այս դեպքով էլ Նուբարաշենի բանտում խուզարկություն է իրականացվել՝ հատկապես սեռական բռնություն իրականացրած հոր՝ Թաթուլ Մադաթյանի խցում:

Իսկ ի՞նչ է հայտնաբերվել:
«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ խցում եղել են հեռախոսներ, Թաթուլ Մադաթյանի մոտ եւս եղել է հեռախոս ու դեռ ավելին՝ հեռախոսի մեջ եղել են մի քանի տեսանյութեր՝ երեխայի մասով:

Խուզարկությունից հետո երեխաների հորը Նուբարաշենի բանտից տեղափոխել են Գավառի քննչական բաժին, ու քննչական գործողություններ են իրականացվում:

Հիշեցնենք, որ քրեական վարույթով պարզվել է, որ Աննա Արեւշատյանն իր 12-ամյա դստեր մասնակցությամբ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու, այն հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով այլ անձանց սեռական կարիքները բավարարելու նպատակով իրացնելու դիտավորությամբ, անչափահաս դստեր նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելով, ստեղծել է իրացրել է մանկական պոռնոգրաֆիա: Մանկական պոռնոգրաֆիայի ստեղծման ժամանակ անչափահաս դստերը պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, նրա նկատմամբ բռնություն գործադրելով՝ կատարել է սեքսուալ բնույթի գործողություններ, իսկ պոռնկագրական բնույթի նյութի պատրաստմանը ներգրավել է նաեւ իր 12 տարին չլրացած երկու աղջիկ երեխաներին: Ծնողները կալանավորված են:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու ցուցակն աչքի է ընկնում իր բազմազանությամբ եւ խայտաբղետությամբ. ցուցակում ընդգրկված են ոչ միայն պաշտոնյաներ, տարբեր ոլորտի ներկայացուցիչներ, այլեւ ԲԳ-ական պատգամավորների ազգականներ: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով կուսակցության ընտրական ցուցակը, նկատեց, որ ցուցակում տեղ է գտել ԲԳ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդին՝ Հովսեփ Աղազարյանը, որը նախկինում Աջափնյակի փոխթաղապետի պաշտոնն էր զբաղեցնում, սակայն Հրաչյա Սարգսյանի պաշտոնավարման օրոք նրան ազատեցին աշխատանքից: Հովսեփ Աղազարյանը տարբեր պաշտոններ է զբաղեցրել այս ընթացքում օգտվելով իշխանության հովանավորությունից: Նա հեղափոխությունից հետո աշխատանքի էր անցել Աջափնյակ համայնքի իրավաբանական վարչությունում, իսկ 2020թ.-ին 37 դիմողից ընտրվել էր մաքսային տեսուչ՝ «Զվարթնոց» օդանավակայանում, արդեն 2021թ.-ին նշանակվել էր Աջափնյակի փոխթաղապետ: Պատգամավորի որդին ԲԳ-ի անբաժանելի մասն է դարձել, ամենուր շրջում է նրանց հետ, աջակցում ու պաշտոն ստանում: ԲԳ-ի ավագանու ցուցակում է նաեւ կուսակցության ղեկավար Հայկ Կոնջոյանի օգնականը՝ Նատալի Սիմոնյանը, որն ԱԺ-ում մշտապես աչքի է ընկել լրագրողների նկատմամբ ամբարտաձան վերաբերմունքով: Վերջինս նաեւ հայտնի է նրա նով, որ լինելով պատգամավորի օգնական՝ Հայկ Կոնջոյանի փոխարեն ղեկավարում է ողջ ԲԳ-ն, պատգամավորներն ավելի շատ իրեն են «հաշիվ տալիս», քան Կոնջոյանին: ԲԳ ցուցակի 34-րդ համարը Երեւանի ամենասկանդալային թաղապետն է՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը: Նա թերեւս հանրությանը հայտնի է ոչ թե իր աշխատանքով, գործունեությամբ, այլ սկանդալային վարքագծով եւ անգործությամբ: Սամվել Ղուկասյանն իր պաշտոնավարման օրոք հասցրել է արդեն համացանցում տարածված մի շարք աղմկահարույց տեսանյութերի հերոս դառնալ. այս հարցում թերեւս գերազանցել է շոու բիզնեսի հայտնի աստղերին: ԲԳ ցուցակում ընդգրկված է նաեւ մարտի 1-ի գրիտերից Գոռ Քլոյանի հայրը՝ Սարգիս Քլոյանը. նա ցուցակում 136-րդ համարն է: Հիշեցնենք, որ Գոռ Քլոյանի քույրը՝ Անուշ Քլոյանն էլ էր նախորդ ավագանիում ընդգրկված, բայց վերջերս ԱԺ պատգամավորի մանդատը վերցրեց: Ցուցակի 155-րդ համարը «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ղեկավար Արմեն Բեգոյանն է, ցուցակում է նաեւ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի՝ հասարակական հիմունքներով խորհրդակցական Արշակ Օրդուկյանյանը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը մինչ պաշտոնական քարոզարշավի մեկնարկը գրեթե ամենօրյա ռեժիմով հանդիպումներ ու քննարկումներ է անցկացրել: ԲԳ-ականները ոչ միայն ներկուսակցական հանդիպումներ են ունեցել, այլ նաեւ քաղաքական տեխնոլոգիաների եւ PR տարբեր մասնագետների հետ են հանդիպել, որպեսզի ամենայն մանրամասնությամբ գծագրեն իրենց քարոզարշավը: ԲԳ-ականները որոշել են քարոզարշավին հիմնականում մասնակից դարձնել հանրության համար ավելի ընկալելի դեմքերի, որոնք ոչ միայն կշռեն իրենց թեկնածու Տիգրան Ավինյանի հետ, այլ նաեւ առանձին վարչական շրջաններում տեղեկատվական թռուցիկներ կբաժանեն, կգրուցեն երեւանցիների հետ: ԲԳ-ում կարծում են, որ հանրության համար քիչ թե շատ ընկալելի դեմքերից են, օրինակ, պատգամավորներ Գեորգ Պապոյանը, Հրաչ Հակոբյանը, ԱԺ փոխխոսնակ Կարո Արշակյանը եւ էլի մի քանիսը, դրա համար էլ հիմնականում հենց նրանք են ավելի հաճախ երեւում հանրության շրջանում ու ավելի ակտիվ մասնակցում քարոզարշավին: Ավելին՝ մեր տեղեկություններով՝ հենց այս քննարկումների արդյունքում էլ ԲԳ-ականները որոշել են, որ Նիկոլ Փաշինյանի ակտիվ մասնակցությունը քարոզարշավին ոչ մի օգուտ չի տալու իրենց, հակառակը՝ վնասելու է, ու Փաշինյանին հասկացրել են, որ չխառնվի քարոզարշավին:



Ըստ Վիճակագրական կոմիտեի վերջին տարվա հրապարակումների՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց բաշխումը, ըստ սեռի, տարիքային խմբերի եւ քաղաքացիության երկրի, 2023 թվականի հունվար-հունիս ամիսներին հետեւյալն է. Հայաստանից ամենաշատը Իրաքի քաղաքացիներն են ապաստան հայցում. այս տարի նրանց թիվը կազմել է 131 մարդ: Երկրորդ տեղում Ուկրաինայի քաղաքացիներն են՝ 115 մարդ անցած 6 ամիսներին: Երրորդ տեղում Իրանի քաղաքացիներն են՝ 40 մարդ: Ի գարնանս մեզ՝ Ռուսաստանն այս շարքում 6-րդն է, ՌԴ-ի քաղաքացիներից անցած 6 ամիսներին միայն 18 մարդ է դիմել ապաստան ստանալու համար: Ինչ-որ առումով սա զարմանալի չէ, քանի որ ռուսների համար Հայաստանն այժմ արտերկրից ֆինանսական միջոցներ ստանալու խողովակ է: Նրանցից շատերը դառնում են քաղաքացի, սակայն կամ մնում են այստեղ, կամ գնում են այլ երկիր հայկական անձնագրով, քանի որ մենք՝ հայերս, շատ երկրներ կարող ենք այցելել, առանց մուտքի վիզայի անհրաժեշտության: Հայաստանից ապաստան են հայցում Նիգերիայի, Իսրայելի, Տաջիկստանի, Ադրբեջանի, Մարոկկոյի, Թուրքիայի եւ այլ երկրների քաղաքացիներ: Աշխարհի ամենաանվտանգ 117 երկրների շարքում Հայաստանը 25-րդն է. գուցե նաեւ այս փաստն է ստիպում մարդկանց ապաստան խնդրել կամ դառնալ ՀՀ քաղաքացի:



ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒՄ

ԵԱՏՄ ՆԻՍՏԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեկ Ճաղկաձորում ընթացավ Եվրասիական միջկառավարական խորհրդի արտահերթ նիստը: Նիստից առաջ տեղի է ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՌԳ վարչապետ Միխայիլ Միստուսինի երկկողմ հանդիպումը:



Այս ցուցանիշը 34,6%-ով բարձր է 2022 թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Հանդիպման ընթացքում կառավարությունների ղեկավարները քննարկեցին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում միջնաժամկետ եւ երկարաժամկետ ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման հարցերը:

Նշենք նաեւ, որ քննարկվել են ԵԱՏՄ շրջանակներում իրավական մեխանիզմների հետագա կատարելագործումը, այլ երկրների հետ փոխգործակցության գոյություն ունեցող ձեւաչափերի ամրապնդումը եւ հնարավոր գործընկերների հետ կապերի հաստատումը:

Եվրասիական միջկառավարական խորհրդի նախորդ նիստը կայացել էր

Սոչիում հունիսի 8-ին: Այս տարի նույնպես միության երկրների վարչապետները հանդիպել էին փետրվարին Ղազախստանում:

Ավելի վաղ հայտնել էինք, որ նիստին մասնակցելու համար ՀՀ էր ժամանել Ռուսաստանի Դաշնության վարչապետ Միխայիլ Միշուստինը:

«Զվարթնոց» օդանավակայանում ՌԳ կառավարության ղեկավարին դիմավորել են ՀՀ փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը, ՀՀ ԱԳ պետական արարողակարգի ծառայության պետ Գագիկ Վանոյանը, Հայաստանում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիլկինը:

Միջոցառմանը ներկա էին նաեւ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի վարչապետները:

ԻՆՉՈ՞ՒՄ ԶԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ



Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ամբողջ կազմով երեկվանից լծվել է նախընտրական քարոզարշավին:

ՔՊ-ականների մի մասը քաղաքացիների թեկնածու Տիգրան Ավինյանի հետ շրջում են Երեւանի տարբեր վարչական շրջաններում, գրուցում քաղաքացիների հետ, մի մասն էլ տեղեկատվական թռուցիկներ են բաժանում:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, որը բավական ակտիվ է ներկուսակցական հավաքների, քննարկումների ժամանակ, քարոզարշավին բավականին պայծառ էր, չէր մասնակցում դրան, ավելին՝ անգամ սոցցանցերում որեւէ աջակցություն ցույց չի տվել թիմին:

Աժ նախագահի խոսնակ Ծովինար Խաչատրյանից հետարքրվեցինք ինչով է սա պայմանավորված: «Քարոզարշավը դեռ նոր է սկսվել, Ալեն Սիմոնյանն անպայման կմասնակցի, բայց թե ինչ ֆորմարտով կամ երբ, չեն կարող ասել, բայց որ մասնակցելու է քարոզարշավին, դա քննարկման ենթակա չէ», - ասաց նա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՐՅԱՆ

ԱԳՐԲԵՋԱՆԸ ԶԻ ԸՆԴՈՒՄՆԻ

Ալիեւը չի ընդունի Բելգիայի ԱԳ նախարարին հայանպաստ դիրքորոշման պատճառով. այս մասին հայտնում է ադրբեջանական գործակալությունը՝ չիրապարակելով իր աղբյուրը:

Ավանդաբար Ադրբեջանի նախագահն ընդունում է երկիր այցելող օտարերկրյա պետությունների արտգործնախարարներին, մինչդեռ APA գործակալությանը հայտնել են, որ Իլիամ Ալիեւը չի ընդունի Բելգիայի արտգործնախարարին՝ «հայանպաստ դիրքորոշման եւ Հայաստանում արած անիմոն հայտարարությունների պատճառով»:

«Հաջա Լաբիբը Հայաստան այցի ժամանակ հնչեցրել է հայանպաստ հայտարարություններ, որոնք հեռու են իրականությունից եւ չեն համապատասխանում տարածաշրջանում տիրող իրավիճակին», - APA-ին ասել է աղբյուրը, որը գործակալությունը չի հրապարակում:

Բելգիայի արտգործնախարարը Երեւանում երկու օր առաջ կայացած ասուլիսի ժամանակ հայտարարեց մասնավորապես, որ Ադրբեջանի պարտավորությունն է Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության ապահովումն ու Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժը, եւ սահմանափակումը սովի սպառնալիք է ստեղծում: Հաջա Լաբիբը խոստացել էր Երեւանում հայտնած դիրքորոշումներն այս շաբաթ Բաքվում էլ կրկնել:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

2023թ. սեպտեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը Հայաստանում կանցկացվեն պահեստազորայինների հերթական հավաքները: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է կառավարության չզեկուցվող հարցերից:

ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ կմասնակցեն ինչպես շաբաթային, այնպես էլ ենթասպաներ եւ պահեստազորի սպաներ:

Հավաքներն անցկացվում են ընդհանուր ռազմական հմտությունների մակարդակը պահպանելու, ինչպես նաեւ պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը օգոստոսի 24-ին որոշում է ստորագրել, ըստ

որի՝ Դանել Դանիելյանը նշանակվում է ԿԳՄՍ նախարարի տեղակալ:

Ո՞Վ Է ՆՈՐ ՊԱՏՁԱՄԱՎՈՐԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը օգոստոսի 24-ի հերթական նիստում հաստատել է ԱԺ պատգամավորին մանդատ տրամադրելու արձանագրությունը:

«Այսպիսով, ինքնաբացարկի դիմում ներկայացրած եւ լիազորությունները վաղաժամ դադարած «Հայաստան» դաշինքի պատգամավոր Անդրանիկ Թեւանյանի մանդատը տրամադրվեց նույն դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Սիեր Ալբերտի Մելիքյանին:

Երեւանի ավագանու ընտրություններում գրանցված «Ուժը հայրենյաց» եւ «Ազգային առաջընթաց» կուսակցությունների ընտրական ցուցակներում ընդգրկված ավագանու անդամի երեք թեկնածու ինքնաբացարկի դիմում են ներկայացրել ԿԸՀ:

«Ուժը հայրենյաց» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված Սոնա Խարբերտյանի եւ Եկատերինա Վալեանուի ինքնաբացարկի դիմումները սահմանված կարգով նոտարական վավերացմամբ են եղել, հետեւաբար վերջիններիս ներկայությունը պարտադիր չի եղել նիստին:

Իսկ ինքնաբացարկի դիմում ներկայացրած ավագանու անդամի մյուս թեկնածու Էլինա Ավետիսյանն անձամբ է դիմում փոխանցել հանձնաժողովին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթը, քանի որ դիմումը չի պարունակել նոտարական վավերացում», - ասված է ԿԸՀ-ի տարածած հաղորդագրության մեջ:



Էջը՝ ԱՆԿԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ավագանին կարո՞ղ է բողոքարկել համայնֆի ղեկավարի որոշումները եւ ո՞ր դեպքում:
Նելլի Աբովյան (34 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխել իր որոշումը:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որեւէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չնդունված:
Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

ՊԱՅՈՒՏ

ՀԱՐՑ. Ի՞նչ նույնականներով է օգտագործվում դեֆակտո դաշնային տարածքում:
Մարիամ Աստուխյան (27 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական պահուստը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության զորահավաքային կարիքները ապահովելու, արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում ապահովելու համար հնարավոր հետեւանքների նվազեցման ու վերացման, փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների եւ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, հումքային եւ վառելիքաէներգետիկ պաշարների, ինչպես նաեւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում պահանջարկի եւ առաջարկի միջեւ անհամամասնությունների առաջացման դեպքում պետական աջակցություն ցուցաբերելու տնտեսության տարբեր ոլորտներին, կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Պետական պահուստը նաեւ օգտագործվում է մարդասիրական օգնություն եւ պարենային ճգնաժամի դեպքում կարգավորող ազդեցություն շուկայի վրա ցուցաբերելու համար:

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



«Ժողովուրդ» օրաթերթը քաղաքացիների ահազանգով մեկնեց Արաբկիր վարչական շրջան, որտեղ ապամոնտաժվում էր քաղաքացի Շահեն Վաղարշակյանի եղբորը՝ Միտր Վաղարշակյանին պատկանող շինությունը:
Ըստ քաղաքացու՝ շինության շինությունության ժամանակը լրացել է, եւ արդեն 2 տարի այն որպես լցակայան չի օգտագործվում: Իսկ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Կարապետյանն ասաց, որ քաղաքացին ծանուցվել է, եւ որոշում է կայացվել քաղաքային պատկանելության հողակտորի վրա գտնվող շինությունն ապամոնտաժել, իսկ քաղաքացին պնդում է, որ իրեն թույլ չեն տալիս դիմել դատարան կամ երկարաձգել ժամկետը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայամուկ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+12 + 15 +23 + 27	Արարատ	+18 + 22 +34 + 37
Կոտայքի լեռներ	+11 + 14 +23 + 26	Արմավիր	+15 + 17 +33 + 35
Կոտայքի նախալեռներ	+19 + 21 +28 + 32	Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +23 + 26
Գեղարքունիք	+10 + 14 +20 + 24	Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +33 + 36
Լոռի	+12 + 16 +25 + 30	Սյունիքի հովիտներ	+18 + 21 +29 + 31
Տավուշ	+16 + 21 +25 + 30	Սյունիքի նախալեռներ	+11 + 15 +21 + 24
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 26	ԼՂՀ	+17 + 21 +27 + 30
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +31 + 35	Երեւան	+26 + 30 +31 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 24.8.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: